№ 271 ԿԻՐԱԿԻ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1909 ԿԻՐԱԿԻ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 271

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ռ., 10 ամսվանը՝ 9 ռ., 9 ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., 7 և 6 ամսվանը՝ 6 ռ., 5 ամսվանը՝ 5 ռ., 4 ամսվանը՝ 4 ռ., 3 ամսվանը՝ 3 ռ., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԻՆԱՍ ՍՕԼՕՄՕՆՕՎԻՉ ՍՈՒԼԽԱՆԵԱՆՑԸ յայտնում է ազգականներին և ծանօթներին, որ կիրակի, դեկտեմբերի 6-ին, հանգուցեալ

Եգոր Գերասիմովիչ ՋՕՀՐԱԲԵԱՆԻ

մահվան տարեդարձի առիթով, Վանքի մայր եկեղեցում տեղի կունենայ ՊԱՏԱՐԱԳ և ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ։

Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգստինը՝ ժ. 12-ին։
(շ. կ.) 1307. 2—2

Ծխախոտի ոչ մի ֆաբրիկա չէ կարող մրցել՝ ՅԱՏԿՈՒԹԵԱՆ կողմից՝ վերջերս բաց թողնված պապիրոսների հետ—

ДРУЖБА и ТОВАРИЩЪ 20 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.

ԱՄԵՆ ՕՐ ՍՊԱՌՎՈՒՄ Է
200,000 ՀԱՏ

Վաճառվում է ամենուրեք

ԾԽԱԽ. ՖԱԲՐ. Ն. Ի. ԲՕՋԱՐՋԵԱՆՑ և ՈՐԴԻՔ.

Հաստատ փաթեթներով

Ցանկութիւն [illegible]

(հ. կ.) առ. 1222. 10—8

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՈՆՈՒՄ
Երկուշաբթի, դեկտեմբերի 7-ին
Հայ Դերասանական Ընկերակցութիւնը
կը ներկայացնէ առաջին անգամ
ՆՈՐ ԿԵԱՆՔ
Պիէս 4 գ. Պոտապենկօյի, թ. Վ. Տէրացեանի
Մասնակցում է ամբողջ խումբը։
Տեղերի գները սովորական են։
Սկիզբն ուղիղ ժամը 8-ին։
Ռէժիսսօր՝ տ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ
(շ. կ.) (առ.) 1311. 2—2

АГЕНТЪ
По сбору объявленій для мѣстныхъ и иногород. газетъ и журналовъ.
М. А. ГАЖОНІА
Տեղական և այլ քաղաքների լրագիրների համար յայտարարութիւններ հաւաքող
ԱԳԵՆՏ
Մ. Ա. ԳԱԺՕՆԻԱ
Ընդունում է ձեռնտու պայմաններով ամեն տեսակ յայտարարութիւններ, թէ տեղական և թէ ուրիշ քաղաքների լրագիրների համար։ Ծառայութեամբ օգտվել ցանկացողներին խնդրում է դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ, Великокняжеская, 40. Телефонъ № 216.
1303. 2—1

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին և վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1.
(երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(Ե. հ. կ.) (առ.) 1045. 100—83

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, շաբաթ, դեկտեմբերի 5-ին
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ—2 ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՑ
Հիւրերը, անդամների առաջարկութեամբ, վճարում են մուտքի համար 50 կոպ.։
Սինեմատօգրաֆի սկիզբը երեկ. ժ. 9-ին։
ԱԶԴ.—Հետևեալ «Ընտանեկան երեկոյթը» երեքշաբթի, դեկտեմբերի 8-ին։ Իտալական օպերայի արտիստ ՎԱՐԴԻԿԵԱՆԻ կազմած խումբը կերգէ հայկական ազգային երգեր։
առ. 1309. 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
Ժողովրդական ներկայացումներ կազմակերպող
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Կիրակի, դեկտեմբերի 6-ին
Հայոց Դրամ. Ընկ. Թատերասէրների խումբը
Երկրորդ անգամ, ժողովրդի խնդրանօք
կը ներկայացնէ
ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ
Ողբերգութիւն 5 գործող., հեղ. Գուցկովի, Թարգմ. Աւալեանի
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան
Տեղերի գները 50-ից մինչև 5 կոպէկ
Ռէժիսսօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
առ. 1313. 1—1

ԿԱԹ
Յ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆ
Պուշկինեան փողոց, № 3.
Օրական երկու անգամ, առաւօտ և երեկոյ, ուղարկում է տները միանգամայն անսրատ, առողջ և մաքուր կաթ, կնքված ամաններով։ (Ե.ու.կ.) (առ) 1304. 10—2

ԿԻՐԱԿԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ 1909 Թ.
ԿԸ ԲԱՑՎԻ
«ԻՄԺԱՆԷ» ԸՆԿ. ՁՄԵՐԱՅԻՆ ԱՅԳԻՆ
Դվօրցօվայա փողոցի վրա, տուն Վրաց Ազնւականների
ՃԱՇ.—2 տեսակ կերակուր, մի բաժակ գինի կամ գարեջուր—60 կ.։ 3 տեսակ կերակուր, մի բաժակ գինի կամ գարեջուր—80 կ.։ 4 տեսակ կերակուր, ½ շիշ գինի № 1 կամ 1 շիշ տեղական գարեջուր—1 ռուբ.։
Այգին ունի շքեղ կահաւորված առանձնասենեակներ ընտանիքների համար և բիլիարդներ։
Իտալական լարանուագ երաժշտախումբ պ. Դեֆրայի ղեկավարութեամբ կը նուագէ ցեր. ժամը 1-ից մինչև 4-ը և եր. կ. ժամը 9-ից մինչև գիշ. ժամը 2-ը։
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՄԵԾ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
ճաշի, ընթրիքի, հարսանիքի և այլն։
Խոհանոցը գտնվում է յայտնի խոհարար պ. Ռոմանի հսկողութեան տակ։
(շ. կ.) (առ.) 1312. 2—2

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Թիֆլիսից յետոյ մեր երկրի միւս նահանգական կենտրոններում տեղի ունեցան խորհրդակցութիւններ պարզելու տեղական ինքնավարութիւն մտցնելու խնդիրները։

Խորհրդակցութիւններին մասնակցում էին պաշտօնական անձեր և տեղական ազգաբնակութեան ներկայացուցիչներ։

Խորհրդակցութիւնների կազմը թէև անկատար էր և լիովին չէր ներկայացնում տեղական կարծիքը, այնուամենայնիւ նա արտացոլաց իր մէջ տիրող հոսանքները։

Ի՞նչ ասացին այդ խորհրդակցութիւնները։

Միայն մի քանի բացառիկ ձայներ լսվեցին ինքնավարական հիմնարկութիւնների դէմ։

Իսկ ընդհանուրը ջախջախիչ մեծամասնութեամբ և ուժեղ շեշտերով ընդգծեց տեղական ինքնավարութեան կարևորութիւնը։

Երկրի ձայնը, որքան նա կարողացաւ արտայայտվել խորհրդակցութիւնների նիստերում, բարձրագոչ յայտնեց, որ տեղական ինքնավարութեան ներմուծումը զգացված պահանջ է ժողովրդի համար և որ նրանով պէտք է աջող պայմաններ ստեղծվեն երկրի բարգաւաճման համար։

Նայելով խորհրդակցութիւնների պարապմունքների ընթացքին, տեսնում ենք, որ համեմատաբար աւելի պատճառաբանված էին Թիֆլիսի խորհրդակցութեան զեկուցումները և որոշումները։ Միւս նահանգներում յատուկ ուսումնասիրութիւններ շատ քիչ էին կատարված և խօսակցութիւնները կրում էին յանպատրաստից արտասանված ճառերի բնաւորութիւն։

Խորհրդակցութիւնների արձանագրութիւններից չեն պարզվում մեր երկրի առանձնայատկութիւնները և նրա պահանջների որակը։

Բարձր պետական առեանների կամ շրջանների համար, օրինակ Պետական Դումայի, Պետական Խորհրդի, մինիստրների խորհրդի համար քիչ կան մշակված այնպիսի նիւթեր, որոնք Կովկասի պահանջները արտացոլացնէին իրանց բնորոշ էութեամբ և գունաւոր բնաւորութեամբ։

Շատ ցաւալի է, որ զեմստվային հաստատութիւնների մի այնպիսի կարևոր օղակ, ինչպէս է փոքր զեմստվային միութիւնը, չէ գնահատվել միւս նահանգական խորհրդակցութիւնների կողմից և միայն Թիֆլիսումն է նա ասպարէզ հանվել իր արժանի նշանակութեամբ։

Փոքր զեմստվային միութիւնը, որ ժողովրդի ամենամերձաւոր զեմստվային հաստատութիւնն է և որի միջոցով գիւղական ժողովրդի ներկայացուցչութիւնը կարող կը լինէր կազմակերպել տեղական ինքնավարական անտեսութիւն, չէ գնահատվել արժանաւորապէս։ Այո, այդ հաստատութեան գաղափարը դեռ այնպիսի խոր արմատներ չէ գցել երկրի մարդկանց մտածողութեան մէջ, որ ամեն տեղ նա գտած լինէր քաջ պաշտպանութիւն, ինչպէս այդ տեղի ունեցաւ Թիֆլիսի խորհրդակցութեան մէջ։

Նահանգական խորհրդակցութիւնների կայացրած որոշումները միատեսակ չեն և նրանք առիթ կը տան ջերմ վիճաբանութեան, երբ հարկաւոր կը լինի նրանց հիման վրա մշակել ընդհանուր ինքնավարական ծրագիր մեր երկրի համար։

Ա. Քալանթար

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Բերլին, 4 դեկտեմբերի

Ռուս-ճապոնական յարաբերութիւնների [illegible] գործակալութեան հաղորդածի առիթով «Կէօլնիշէ Ցայտունգը» գրում է, որ այդ հաղորդածը բոլորովին ճշգրէն պատկերացնում է ներկայ դրութիւնը. չափազանցված տեղեկութիւնները Ճապոնիայի առաջիկայ ագրեսիվ գործողութիւնների մասին հաւանօրէն ծագել են այն պատճառով, որ Ճապոնիան ձգտում է ուժեղանալ Մանջուրիայում գաղթականութեան միջոցով, որ գլուխ է գալիս վերին աստիճանի աջողութեամբ, զուտ ճապոնական հետևողականութեամբ. ռուսները կարող չեղան ոչինչ հաւասարարժէք հակադրել ճապոնական այդ գաղթականութեան դէմ, որ միանգամայն հասկանալի կերպով որոշ անհանգստութիւն է ծնեցնում ռուսների մէջ։ (Հ. Գ.)

«Русск. Слово» լրագրում տպված է գերմանական ֆինանսիստ և քաղաքագէտ Ռուդոլֆ Մարտինի կարծիքը ռուս-ճապոնական յարաբերութիւնների մասին։

— Ես կատարելապէս անհաւանական եմ գտնում,—ասում է վերջում Մարտինը,—որ Ռուսաստանին աջողվի ձգձգել պատերազմը էլի հինգ տարով։

ԲԵԼԳԻԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՀԸ

Բրիւսսէլ, 4 դեկտեմբերի

Լէօպօլդ թագաւորը մեռաւ գիշերվայ ժամը 2 և 35 րոպէին։ Թագաւորի մահը տեղի ունեցաւ բոլորովին անսպասելի. բժիշկները երէկ, դեռ երեկոյեան ժամը 11-ին, յոյսեր տուին, որի պատճառով թագաւորի մօտ Լակէն ամրոցում մնացին միայն պալատական բժիշկը և բարոն Գոֆֆինէն։ Թագաւորը մեռաւ երակների փակումից։ Բարոն Գոֆֆինէն անձամբ, մօտ գիշերվայ ժամը 3-ին, թագաւորի մահվան մասին տեղեկացրեց թագաւորական ընտանիքի անդամներին։

Թագաւորը իր կեանքի վերջին ժամերն անցրեց հանգիստ։ Մօտաւորապէս ժամը 2 և 20 րոպէին նա անակնկալ կանչեց բժիշկներին և ասաց՝ «շնչասպառ եմ լինում»։ Մի քանի րոպէից յետոյ նա հոգին աւանդեց։ Այդ պահին թագաւորի մօտն էին բժիշկներ Տիրիար և Դէպաժ։ Ժամը 4 և 10 րոպէին գթութեան քոյրերից մինը, լսելով թագաւորի տնքոցները, բժիշկ կանչեց։ Բժիշկը կաշուի տակ սրսկեց մօրֆին, բայց անհետևանք։

Պրինց Ալբերտը և պրինցուհի Կլեմենտինան եկան Պալմօվի պավիլիօնը 25 րոպէից յետոյ։

Ներկայումս շարունակ երթևեկում են աւտոմօբիլներ և կառքեր Լակէնի պալատի և Բրիւսէլի միջև։ Բոլոր մինիստրներին տեղեկութիւն տրվեց հեռագրով։ (Հ. Գ.)

Բրիւսէլ, 4 դեկտեմբերի

Ջանազան քաղաքներից տեղեկութիւններ են հասնում, որ ազգաբնակութիւնը սգի մէջ է։

Թագաւորի մարմինը երեկոյեան կը փոխադրվի Բրիւսէլի պալատը։ Թաղումը տեղի կունենայ դեկտ. 9-ին։

Դեկտ. 10-ին գահաժառանգը կրդւէ սահմանադրութիւնը պահելու։

Այսօր տեղի ունեցան սենատի և պատգամաւորների պալատի նիստերը։ Երկու պալատների նախագահները վշտակցութիւն յայտնեցին կորստեան առիթով, որից յետոյ նիստերը փակվեցին։ (Հ. Գ.)

Տեղի սղութեան պատճառով մենք չը կարողացանք տալ այս համարում նորոգ վախճանված Լէօպօլդ II-ի կենսագրութիւնը։

ՆԻՍՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Վիէննա, 4 դեկտեմբերի

Պատգամաւորների պալատի նիստը շարունակվում է արդէն 56 ժամ։ Միջադէպեր չը կան։ (Հ. Գ.)

Վիէննա, 4 դեկտեմբերի

Կէսօրին [illegible], որ օբստրուկցիային թշնամի կուսակցութիւնները տրամադրված են քննել պալատի նակազը փոխող նախագիծը՝ նախագահի իշխանութիւնը ընդլայնելու մտքով այն պայմանով, որ բոլոր հերթական առաջարկութիւնները յետ առնվեն, որպէսզի երաշխաւորութիւն տրվի, որ ժամանակաւոր բիւջէն կը գործադրվի պալատի միջոցով։ (Հ. Գ.)

Վիէննա, 4 դեկտեմբերի

Առաւօտեան ժամը 7 և կէսին րէյխսրատի նիստը շարունակվեց անընդհատ։ Երէկ երեկոյեան և այսօր առաւօտեան վերնասրահներում գտնվող հասարակութիւնը յաճախակի ընդհատում էր նիստը վիրաւորական դարձուածքներով օբստրուկցիօնիստների հասցէին և աղմուկով։ Այդ պատճառով վերնասրահներից հասարակութեանը դուրս տարան։ Նիստը շարունակվում է։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կահիրէ, 4 դեկտեմբերի

Առաւօտեան վախճանվեց թիւրք-յունական պատերազմի ժամանակի յայտնի թիւրք զօրապետ Էդհէմ-փաշան։ (Հ. Գ.)

Պարիզ, 4 դեկտեմբերի

Երբ պաշտօնական կորտէժը Ֆալիէրի առաջնորդութեամբ վերադառնում էր վիրաբոյժ Պէանի արձանի բացման հանդէսից, ճանապարհին ռօեալիստները ցոյց կազմեցին յօգուտ Մատիսի, որ բանտ է նստած Ֆալիէրին վիրաւորելու համար։ Ձերբակալվեցին, յետոյ արձակվեցին 19 մարդ։ (Հ. Գ.)

Աթէնք, 4 դեկտեմբերի

Ֆինանսների մինիստրը պատգամաւորների պալատին ներկայացրեց 1910 թւի բիւջէն և յայտնեց, որ 1908 և 1909 թւականներին ստացվեց 24 միլիօն դրախմի դեֆիցիտ, որի պատճառով չէ կարելի կառավարվել առանց փոխառութեան։ Ծախքերն աւելացել են 25 միլիօնով։ (Հ. Գ.)

Բուդապեշտ, 4 դեկտեմբերի

Կոշուտի կուսակցութեան ուղերձով առաջարկվում է կառավարութեանը կատարել միմիայն անյետաձգելի ծախքերը։ Ջուստի կուսակցութիւնը որոշեց բոլոր ույժերով արգելք լինել ժամանակաւոր բիւջէն ընդունելուն։ Ժողովրդական կուսակցութեան կոնֆերենցիան որոշեց ընդունել ժամանակաւոր բիւջէն։ (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 4 դեկտեմբերի

Բիւջէի առիթով սկսւեցին բուռն վիճաբանութիւններ։ (Հ. Գ.)

—

Մանագուա, 4 դեկտեմբերի

Զէլայի նախագահը հաղորդեց Տաֆտին, որ թողնում է իր լիազօրութիւնները, որպէսզի հնարաւոր դարձնէ Նիկարագուայի հանրապետութեանը վերսկսել իր բարեկամական յարաբերութիւնները Միացեալ-Նահանգների հետ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 4 դեկտեմբերի

«Россія» լրագիրը կտրուկ կերպով հերքում է լրագիրներից մի քանիսի այն տեղեկութիւնները, թէ ներքին գործերի մինիստրի պաշտօնը անջատելու են մինիստրների խորհրդի պաշտօնից։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 4 դեկտեմբերի

Աւստրական բօրսային կից տեղի ունեցաւ 36 ընկերակցութիւնների ժողովը, ուր խօսվեց եկամտային հարկի և պետական մենաշնորհների դէմ և յօգուտ ընտրողական բարենորոգման։ (Հ. Գ.)

—

Ծայրայեղ աջակողմեանները բողոք ներկայացրին Պետական Դումայի Նախագահ Խոմեակովի դէմ, որ չը կանգնեցրեց պատգամաւոր Չխէիձէին, որը իբր թէ յունիսի 3-ի ակտը անուանեց մեծագոյն յանցանք։ («В.»)

—

Այլազգիների դպրոցների մասին կանոնադրութիւն մշակող յանձնաժողովի մէջ հրաւիրված էին Չխէիձէ, Գեգեչկօրի, Սադթէլեան և Խասմամէդովը։ Խորհրդակցութիւնը հնարաւոր համարեց թոյլատրել դասաւանդութիւնը վրաց, հայոց և թուրքերէն լեզուներով։ Խասմամէդովի առաջարկութիւնը, որ թոյլատրվի դասաւանդութիւնը նոյնպէս օսմաներէն լեզուով, մերժվեց՝ համիսլամական պրօպագանդայից խուսափելու համար։ («В.»)

—

Լօզանում վախճանվել է իշխ. Լ. Դ. Վեազեմսկին, Պետական Խորհրդի անդամը, երբեմն կառավարիչ Թագաւորական տան անշարժ կայքերի (ուդելի)։ Ինչպէս յայտնի է, իշխանը պատւաւոր աքսորումն էր գտնվում այն պատճառով, որ 1901 թւին, վրդովված՝ Պետերբուրգի ոստիկանութեան արարքից, Կազանի տաճարի հրապարակի մօտ պաշտպան կանգնեց ծեծվող ուսանողներին։

—

«Рус. Вѣд.»-ի սեփական թղթակիցը Հռոմից հեռագրում է, որ յայտնի իտալական սօցիալիստ պրոֆեսոր իրաւաբան Էնրիկօ Ֆէրրին թողել է կուսակցութիւնը։ Կարծում են, որ այդ վճիռը նախապատրաստական քայլ է մինիստրական պաշտօն ստանձնելու համար։

—

Պարիզի գրաւական լոմբարդը աճուրդի է հանել հանգուցեալ Աբդիւլ-Ազիզի գրաւ դրած գանձերը, 68 կտոր, որոնց համար սուլթանը ստացել էր 2 միլիօնից աւել ֆրանկ։ Միայն 2 կտոր զարդարանքները գնահատվում են 3 միլիօնից աւել։

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պօլիս, 24 նոյեմբեր

Քաղաքական նոր կուսակցութիւն մը, «Չափաւոր Ազատականներ» անունով, կը մշակէ իր ծրագիրը, որու պիտի հետեւի իր գործունէութեանը մէջ։ Իր այդ ծրագրին հիմքը, որքան կարելի եղած է հասկնալ կողմնակի ճամբաներով, կը կազմեն այն ամէն սկզբունքները, որոնք անտարակոյս ցանկալի են ամէն լուրջ օսմանցիի։ Ու այդ սկզբունքներն են՝ հաւասարութիւն երկրին այլ և այլ տարրերուն մէջ, արդարութեան անաչառ, անկաշառ գործադրութիւն, արդարադատութեան բարենորոգութիւն, համեմատական ներկայացուցչութիւն պաշտօններու մէջ, ծովային ու ցամաքային ուժերու նորոգութիւն, ապակեդրոնական դրութիւն։

Կուսակցութիւնը, առ այժմ, իր մէջ ունի, գլխաւորաբար, յոյներ ու արաբներ։ Մերինները, անշուշտ, լաւիկ հանդիսատես են՝ տեսնելու համար թէ ինչ ընդունելութիւն պիտի գտնէ կուսակցութիւնը։ Ու եթէ ատոր մասնակից չեն, ադ չի նշանակեր, թէ ընդդիմադիր են կամ պիտի ըլլան, որովհետև, ինչպէս կը տեսնուի, ծրագիրը արժանի է ամէն համակրանքի, բոլորովին համապատասխան մեր չափաւոր բաղձանքներուն։ Այն օրը, որ ընդունելութիւն գտնէ Չափաւոր Ազատականութիւնը, հարկաւորաբար մերինները կը կազմեն անոր պահեստի ուժը՝ ստիպող բողքներու մէջ անոր օգնութեանը հասնելու։ Բայց այսօրուընէ մէջ մտնելը ոչ միայն օգտակար չէ, գուցէ վնասաւոր իսկ ըլլայ, որովհետեւ ան, ինչ որ տեղի ունենայ մերինները ձեռներէցութիւնովը, գուցէ չարաչար թարգմանուի, և գործը վիժէ իր սաղմնային վիճակին մէջ։

Զինուորագրական նախնական գործողութիւնները վերջանալու մօտ են. շատ տեղ վիճակներն ալ քաշուեցան։ Մեր հարուստները, ձեռքերնին պատրաստած են համբելու կարմրուկ ոսկիներ, որպէսզի իրենց փափկասուն որդիները ազատ մնան զինուորական ծառայութենէ։ Այդպէս, զէնքն ու զինուորութիւնը բաժին կը հանուին միմիայն անոնց, որոնք բաղդին առանձնաշնորհեալները չեն։ Եթէ մեր ունեւորները քիչ ու շատ սէր ունենային իրենց դրամին հետ, եթէ քիչ մը տաքուկ սէր ունենային ազգին ընդհանրական, քաղաքացիական կեանքին համար, գոնէ մեր զինուորական առաջին շրջանի սկիզբը յանձն կառնէին որ իրենց որդիներն ալ, հաւասար պարտականութիւնով, եղբայրակցէին զէնքի տակ, և ատով խրախոյս մը կը տրուէր բաղդէն անժառանգ զաւկներու համար։

Կառավարութիւնը դրամական հատուցումներէ դժգոհ չէ. ան շատ լաւ հաշուած էր, որ ջնջուած զինուորական տուրքերու տեղ, այս անգամ, շատ դիւրութեամբ ունեւորներուն ոսկիները պիտի գային լեցնելու թափուր դրամարկղները։ Ու մերիններէն անոնք, որ իրենց բերնին մէջ, իբրև յաւիտենական կցուրդ (refrain), ունեցան «չունինք», «չմնաց», «մենք ալ աղքատացանք» խօսքերը, այսօր կազմ և պատրաստ են պաղըուն ոսկիները համբելու՝ թոյլ չտալով որ իրենց որդիները մտնեն պատուի և պարտականութեան ասպարէզին մէջ, եղբայրանալու փառքի ճամբուն վրայ։

Այդ առաջին ցածութիւնը չէ, որ ի տես կուգայ մեր ձեռքին մէջ, ունեւոր դասակարգին կեանքով։ Ամէն վտանգի ատեն՝ ունեւորը դասալիք մըն է, փախստականը պարտականութեան շաւղին վրայ, թողլով իր ազգակիցները վտանգին առջև՝ մինակ և անօգնական։

Զինուորագրութեան շուրջը արձագանգուած պահանջումները, որոնք կը բարձրանան հրէաներու բարունակետարանէն և յոյն պատրիարքի կողմէ, այնքան մանկական են, որ ծիծաղ կը շարժեն. բարունակետը կը պահանջէ, որ հրէայ զինուորները ունենան «ազգային կերակուրները». յոյն պատրիարքը կը պահանջէ, որ խաչ կախուի յոյն զինուորներու կուրծքին վրայ ու անկողիններուն վերևը. բուլղար էքզարքն ալ կուզէ իրաւունք ունենալ առաջարկելու, որ բուլղար զինուորներու ննջարանին մէջ պատկեր ու լամբար կախուին։ Մեր պատրիարքարանը, բարեբաղդաբար, մոլեռանդութեան իբրև ցոյց, ոչ մէկ պահանջք ներկայացուց ու, կարծեմ, չպիտի ընէ ալ։ Մեզի համար կարևորն է հայ զինուորին պատիւը, անոր զինուորական [illegible] իրաւունքին պահպանութիւնը. ու պայմանները՝ որոնց մէջ գոյութեան հնարաւորութիւնը ըլլայ։ Ատով, անգամ մըն ալ, առիթ կուտանք, որ թիւրքերը ըմբռնեն թէ մենք մեր պահանջումներուն մէջ որքան չափաւոր ենք, ու արդարև հաւատարմօրէն կապուած երկրին խաղաղութեանը, խաղաղ զարգացումին, օրինական յառաջդիմութեանը։

Պարլամենտը նոր կենդանութեան նոր նշաններ ցոյց չի տար. մանր-մունր հարցերով ժամավաճառ կըլլայ։ Դահլիճը իր վարչական ծրագիրը պիտի մատուցանէ խորհրդարանին։ Հետաքրքրական պիտի ըլլայ տեսնել, թէ ինչ պիտի ըսէ Հիլմի փաշան։ Ալբանական հարցն ու Եմէնը բաւական թնճկոտութիւն ունին։ Հիլմին կամ կիյնայ այդ խոչընդոտներուն դէմ պարտուած և կամ, ինչպէս ցարդ աչքակապուկ խաղաց Ադանայի աղէտքին հետ, կմնալը տալով օսմ. կոմիտէի ձեռքերը կերկնցնէ նոյն կուսակցութեանը ու կը ցատկէ ալբանական ու արաբական խաղերու վրայէն։

Իհսան Ֆիքրին մեկնած է, կըսուի, ագնուաշուքօրէն, ու ոչ ոք կը խօսի անոր մասին։ Ասաֆի համար դատավարութիւն մը հաւանական է, դատավարութիւն, այլ ոչ թէ վերաքննութիւն. այս պարագան պէտք է շեշտել, որովհետև զինուորական ատեաններու վճիռները, ինչպէս գրած եմ ժամանակին, վերաքննելի չեն երբեք. այդպէս հռչակուած են ի սկզբան, ու այդպէս ալ պիտի մնան։ Ասաֆի դատավարութեան համար նորագոյն պատճառներն են քանի մը հեռագիրները, նոր հաստատական փաստեր, որոնք դատավարութեան ատեն լոյս տեսած չէին և կամ յետոյ մէջտեղ ելած են։ Դահլիճը, վերաքննութիւններէ հեռանալով, նոր դատավարութեանց սկզբունքը ընդունեց նոր ամբաստանութիւններով։

Ցրտին, փոթորկալից, անձրևոտ ու ցեխոտ օրեր եկան, գարունի օրեր եկան Վոսփորի վրայ։ Երանի թէ նոյն կարգի փոփոխութիւն մը գար միտքերու մէջ, և պայծառ տեսութիւններով իրերն ու մարդիկը տեսնուէին, հարցերն ու հանելուկները լուծուէին։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՌԱՑՎԱԾ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Պետերբուրգում նոյեմբերի 24-ին արխիտեկտօրների ընկերութեան մէջ նկարիչ Ա. Էյմնէրը մի զեկուցում է կարդացել Անդրկովկասի մոռացված գանձերի մասին։ Այդ գանձերն են՝ հին-վիրական եկեղեցական և դինաստիական որմանկարները, օրնամենտները և սրբապատկերները, որոնք գտնվում են Մինգրելիայի, Գուրիայի և Իմերեթիայի կիսակործան վանքերում և տաճարներում։ Այդ որմանկարների պատճէնը պարունակում է 150 համարներ և պատկանում է Ալեքսանդր III Կայսրի թանգարանին։ Նկարչական տեսակէտից այդ որմանկարները և օրնամենտները ներկայացնում են առանձին արժէք. էլ առաւել անցանկալի է նրանց սիստեմատիք ոչնչանալը, որ տեղի է ունենում տեղական հոգևորականութեան տգիտութեան և ազգաբնակութեան անտարբերութեան պատճառով։ Մինգրելիայում, ի միջի այլոց, հետաքրքրական է Մարտվիլի հազարամեայ տաճարը։ Որմանկարները ամբողջ են, բայց թափվում են։ Մօզայիկ նկարներից շատերը սուաղված են, տանիքը ծառայում է չղջիկների ապաստարան, մինչդեռ այնտեղ կան գեղեցիկ ուզօրներ։ Բաչինեան գաւառի մէջ կայ մի հինաւուրց տաճար—ս. Նիկողայոս Նիկօրցմինդայի։ Նա առանձնապէս հարուստ է որմանկարներով։ Վրաստանի երեք անուանի ցեղեր՝ Էրիստավները, Ցուլուկիձէները և Մաչաբելիները երկար պահպանեցին այդ տաճարը, բայց այժմ նա կիսակործան դրութեան մէջ է։

Միաձայն որոշվեց տպել կարդացված զեկուցագիրը որքան կարելի է մեծ քանակութեամբ հասարակութեան լայն խաւերի ծանօթութեան համար։ Նախագահ Կիտները յանձն առաւ համապատասխան զեկուցագիր ներկայացնել օգոստափառ պատուաւոր նախագահուհուն։ («Н. В.»)

ԳԵՆԵՐԱԼ ԶԷՅՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ

—

«Figaro» լրագրի թղթակից Ռընէ Մարշալ, որը Պարիզի լրագրում նամակներ է տպում Պետերբուրգից և ժամանակ առժամանակ հաղորդում է իր խօսակցութիւնները ռուս բարձրաստիճան պաշտօնեաների հետ, բերում է «Figaro» լրագրի վերջին համարներից մէկում իր խօսակցութիւնը ֆինլանդական նոր գեներալ-նահանգապետ գեներալ Զէյնի հետ, որ նա ունեցել է նրա հետ Հէլսինգֆօրսում նոյեմբերի 17-ին Ֆինլանդիայի ներկայ դրութեան մասին։

Գեներալ Զէյն սկսեց խօսակցութիւնը հետեւեալ խօսքերով. «Ես չէի ցանկանում մինչև այժմ ոչ մի ժուռնալիստ ընդունել, որովհետև ես համարում եմ, որ ես չը պէտք է պարզաբանեմ կամ որոշեմ քաղաքականութիւնը։ Այդ քաղաքականութիւնը իմը չէ և չը պէտք է իմը լինի, այլ կայսերական կառավարութեանը, այսինքն մինիստրների խորհրդինը։ Միւս կողմից ես գիտեմ, որ իմ պաշտօնի մէջ մտնելու րոպէից իմ իւրաքանչիւր խօսքը կարող է բացատրվել այստեղ այլ կերպ, որպէս անհամապատասխան նրան կամ նրա համար աննպաստ մտքով»։ Ապա, նկատելով որ նա բացառութիւն է անում «Figaro» լրագրի աշխատակցի համար այն պատճառով, որ այդ լրագիրը միշտ անկողմնապահ լեզուով է խօսում Ռուսաստանի մասին, գեներալ Զէյն խօսեց ներկայ ճգնաժամի մասին։

«Ինչ վերաբերում է,—ասաց նա,—ճգնաժամի հետևանքներին, ինձ համար մինչև անգամ, որ հետևել եմ նրա զարգացմանը քայլ առ քայլ, անհնարին է նախատեսել նրանց։ Ներկայումս երկրում կատարեալ հանգստութիւն է տիրում։ Բայց արդեօք կը շարունակվի՞ նա։ Անմտութիւն կը լինէր դրականապէս պատասխանել այդ հարցին ազգաբնակութեան փակ բնաւորութեան պատճառով։ Ցամենայն դէպս մենք պէտք է ամեն միջոց ձեռք առնենք, որպէսզի պատրաստ լինենք. յամենայն դէպս, պէտք է պատրաստվենք ամեն պատահականութեան առաջ»։ Թղթակցի այն հարցին, թէ արդեօք ռուս կառավարութեան քաղաքականութեան հետևանքը Ֆինլանդիան «միացնելը» չէ՞ լինելու, որպէս շատերը, ըստ երևոյթին, համոզված են դրանում, գեներալ Զէյն պատասխանեց. «Ես պատասխան չեմ կարող տալ այդ կէտի վերաբերմամբ։ Այն, ինչ ցանկանում է կայսերական կառավարութիւնը, դա Ֆինլանդիայի օրինական անկեղծ մերձաւորումն է Ռուսաստանի հետ։ Նա Ֆինլանդիային չէ մերժում ինքնավարութիւնը,—այնքան լիակատար, որքան դա հնարաւոր է,—բայց նա չէ կարող թոյլ տալ, որ Ֆինլանդիան հանդէս գայ որպէս ինքնուրոյն պետութիւն»։

Ապա գեներալ-նահանգապետը սկսեց բնորոշել գեներալ Բոբրիկովին։ «Ֆինլանդացիները,—ասաց նա,—նկարագրում էին Բոբրիկովին խստասիրտ և իշխանասէր վարչապետ, որը աշխատում էր խլել նրանց ազատութիւնը և խախտել նրանց իրաւունքները։ Դա կատարելապէս սխալ է, և ես, որ պատիւ ունէի ծառայել նրա հրամանատարութեան ներքոյ, կարող եմ ձեզ ասել, որ գեներալ Բոբրիկով իսկապէս չափազանց մարդասէր և բարի մարդ էր, որ նա եկաւ այստեղ ոգեւորված ամենախաղաղասէր դիտաւորութիւններով, և եթէ նա պարտաւոր էր, հանգամանքներից ստիպված, խիստ միջոցներ ձեռք առնել, դա ռուսական շահերի պաշտպանութեան համար էր, կռիւ մղելու համար այն թշնամութեան դէմ, որ գաղտնի կերպով երևան էր գալիս, որպէս նա տեսնում էր իւրաքանչիւր օր»։ Թղթակցի վերջին հարցին, թէ նոր գեներալ-նահանգապետի քաղաքականութիւնը երևի վերադարձ կը լինի դէպի Բոբրիկովի քաղաքականութիւնը, գեներալ Զէյն պատասխանեց. «Ես ձեզ կրկնում եմ, որ ես «քաղաքականութիւն» չեմ ունենալու, բայց դուք կարող էք հաւատացած լինել, որ, ինչ էլ պատահելու լինի, կայսերական կառավարութիւնը միշտ պատրաստ կը գտնի ինձ կատարելու նրա հրամանները»։ («Р. В.»)

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԺՈՂՈՎՐԴ. ՏԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ

Դեկտ. 4-ի երեկոյեան ժամը 9-ին պատիւ ունեցան ներկայանալ Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին և նրա ամուսին Ել. Ա. Վորոնցովա-Դաշկովային Զուբալովեան թատրոնում ի միջի այլ սեկցիաների ներկայացուցիչների՝ նաև հայկական թատրոնական սեկցիայի կողմից՝ տ. Վ. Մամուլեան, պ. պ. Յ. Տէր-Գրիգորեան և Գ. Երիցեան։

Փոխարքան ընդունեց շատ սիրալիր կերպով, մանրամասն հարց ու փորձ արեց հայոց թատրոնի ռեպերտուարի, թատրոն այցելող հասարակութեան մասին, ի միջի այլոց դերասանների կազմի մասին։ Առանձնապէս հետաքրքրվեցին դրամատուրգ Գ. Սունդուկեանի հին և նորագոյն պիեսներով. ներկայացուցիչները խնդրեցին կոմսին և կոմսուհուն պատւել իրանց այցելութեամբ նաև Զուբալովի ժողովրդական թատրոնում տեղի ունեցող հայկական ներկայացումը, որին թէ կոմսը և թէ կոմսուհին պատասխանեցին, որ իրանք հայերէն չեն հասկանում, բայց երբ իմացան, որ խումբը կը դնի ծանօթ բովանդակութեամբ պիես, երկուսն էլ խոստացան այցելել՝ մի անգամ հայկական ներկայացումը։ Ունկնդրութիւնը տեւեց մօտ 20 ր.։ Պատգամաւորները նուիրեցին կոմսուհուն մի ծաղկեփունջ, իսկ կոմսին ներկայացրին հայկական ոճով մի պանակ, որի մէջ դրված էր թատրոնական հայ սեկցիայի պատմութիւնը, նաև տեղեկութիւններ՝ թէ ինչ պիեսներ և քանի անգամ են ներկայացված մայիսից մինչև օրս։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

—

Պետերբուրգ, 4 դեկտեմբերի

26-րդ նիստը բացվում է ժամը 11 և 19 րոպէին։ Նախագահում է Խոմեակովը։

Հերթին դատական բարենորոգման օրինագծի յօդուածային քննութեան շարունակութիւնն է։

[illegible] II յօդուածը, որի համաձայն դատավարութիւնը դատաստանական հաստատութիւնների մէջ պէտք է կատարվի ռուսերէն։

Անտօնովը, բերելով Ռուսաստանի զանազան տեղերում ապրող օտարազգիների մասին վիճակագրական տեղեկութիւններ և յենվելով Ալեքսանդր III Կայսրի թագաւորութեան օրէնքի վրա, որով 1889 թ. յուլիսի 9-ին Պրիբալտիկ երկրի տեղական դատարաններին իրաւունք շնորհվեց գործածել տեղական լեզուն, առաջարկում է հետևեալ լրացուցիչ կէտը. «Հաշտարար դատաստանական հաստատութիւններում այն տեղերի համար, ուր ազգաբնակութեան մեծագոյն մասը չէ հասկանում ռուսերէն (այդ տեղերը որոշում է արդարադատութեան մինիստրը հաշտարար համագումարների առաջադրութիւնների համաձայն), գործերին մասնակցող անձանց և նրանց օրինական ներկայացուցիչներին, նաև հաւատարմատարներին թոյլ է տրվում ռուսերէն չը գիտենալու դէպքում յայտնել բերանացի խնդիրք և բողոքներ, ինչպէս և ներկայացնել բերանացի բացատրութիւններ, տեղական լեզուով, և այդ դէպքում հաշտարար դատաւորը տեղական լեզուն չիմանալու դէպքում բացատրվում է թարգմանի օգնութեամբ։ Վերոյիշեալ անձանց խնդրանօք նրանց բերանացի յայտարարութիւնները, որոնց նրանք տալիս են գրաւորապէս տեղական լեզուով, կարող են կցվել դատավարութեան» (ծափահարութիւն կենտրոնի մի մասում և ձախակողմում)։

Արդարադատութեան մինիստրը մատնանշում է, որ դատական լեզուի հարցը հանդիսանում է չափազանց էական, ինչպէս համեմատական տեսակէտից, այնպէս և դատական տեխնիկայի մտքով։ Յենվելով Հիմնական Օրէնքների 3-րդ յօդուածի վրա, մինիստրն ասում է, որ համապետական տեսակէտը հրամայողապէս ցոյց է տալիս, թէ դատաւորների համար ցանկալի է պահանջել գործադրել ռուսաց լեզուն։ (Ծափահարութիւն աջից)։

Լեւոնիցկին աշխատաւոր խմբակի անունից առաջարկում է դատավարութիւնը կատարել ամեն մի տեղում ազգաբնակութեան մեծամասնութեան լեզուով։

Գրօձիցկին առաջադիմականների անունից առաջարկում է բոլորովին դուրս ձգել այդ յօդուածը։

Բոբրինսկին ասելով, Անտօնովի ուղղումը բնաւ չէ վերաբերում լեհ ժողովրդին, քանի որ օրէնքը չէ վերաբերում Լեհական Թագաւորութեանը։

Լուցիցկին, Տիմօշկինը, Զամըսլովսկին և Մակլակովի խօսելուց յետոյ յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 4 և 38 րոպէին։ Այս անգամ նախագահում է Շիդլովսկին։

Անտօնովը պատասխանում է թէր և դէմ խօսողներին։

Միլիւկովը առարկելով արդարադատութեան մինիստրին, առանձնապէս կանգ է առնում աջակողմեանների լօզունգի վրա «Ռուսաստանը ռուսների համար» և ապացուցանում է, որ այդ լօզունգը չէ կարելի նոյն իսկ ռուսացում անուանել. այդ լօզունգը ոչ թէ ստեղծող, այլ քանդող է. աջակողմեանները, որոնք հանդէս են գալիս նրա պաշտպանութեան համար, չեն կարող հայրենասէրներ համարվել։

Մինիստրը բուռն կերպով բողոքում է Միլիւկովի այն ասածի դէմ, թէ հիմնական օրէնքների 3-րդ յօդուածը կործանիչ է։ Ընդհակառակն այդ սկզբունքը միացնում և ամրապնդում է պետութիւնը (ծափ. աջից)։

Թերթիկներով որոշվում է խօսք տալ չորս հռետորի միայն։

Յօգուտ տեղական լեզուով դատավարելուն խօսում են Հէյդարովը և Եւլօգիյ եպիսկոպոսը։

Չխէիձէն, կանգ առնելով արդարադատութեան մինիստրի ճառի վրա, մատնանշում է, որ տիրապետող ժողովրդի շահերի պաշտպանով ասպարէզ իջաւ այն միևնոյն մինիստրը, որ կենդանի մարմնացումն է ապօրինութեան և անիրաւութեան, մինիստր, որ պոկեց Ֆէմիդայի քօղը և տուեց նրան պրօվօկատորի, լրտեսուհու դերը (ծափ. ձախից, ձայներ աջից. «Գործին դիմեք»)։

Նախագահը խնդրում է աւելի մօտ լինել հարցին։

Չխէիձէի կարծիքով, երբ աջ կողմից լսվում է «Ռուսաստանը ռուսների համար» լօզունգը, դրանով չէ հասկացվում «Ռուսաստանը վելիկօրուսների համար», ինչպէս կարծում է Միլիւկովը, այլ «Ռուսաստանը ջարդարարների համար» (ծափ. ձախից, ծիծաղ և սուլոց աջից)։ «Ռուս ժողովուրդը յանձին ռուս բանւորի և ռուս գիւղացու,—վերջացնում է հռետորը,—կը պաշտպանէ մեզ, եթէ այս ամբիոնից մենք ազդարարենք «Կեցցէ Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդների ազատութիւնը, կորչին սև-հարիւրեակութիւնը և սև-հարիւրեակային մինիստրները» (ծափ. ձախից)։

Աջակողմեան Կապուստինի խօսելուց յետոյ, հանդէս է գալիս Ռօդիչեվը, որի ճառի ժամանակ աջակողմեանները աղմկում են և աղաղակում, այնպէս որ նախագահը ստիպված է լինում նիստը ընդհատել ժամը 10 և 30 րոպէին։

Պատգամաւորների մեծ մասը դահլիճից դուրս չէ գնում, շատերը հաւաքվում են դահլիճի կենտրոնում. Աջէմեանը դիմում է աջակողմեանների կողմը. դէպի նա է վազում Տիմօշկինը։ Երկուսը փոխանակում են մի քանի խօսքեր, որոնք չը լսվեցին աղմուկի պատճառով, և սկսում են բռունցքամարտ։ Պրիստաւի օգնականները և իշխան Կիլդիշեվը բաժանում են նրանց և պահում են Տիմօշկինին։

Ժամը 11 և 5 րոպէին նախագահը նորից գրաւում է իր տեղը, սակայն աղմուկի պատճառով նիստը փակում է։

Փակելուց առաջ նա առաջարկում է Թագաւոր Կայսրի անուանակոչութեան առիթով լիազօրութիւն տալ իրան ուղարկել ամենահպատակ հեռագիր Դումայի կողմից։

Աջակողմեանները և կենտրոնը աղմկալի ծափահարութեամբ ողջունում են այդ առաջարկութիւնը։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքների խորհուրդը հիմնադիրների առաջարկութեամբ ուղարկում է դասընթացքների կողմից իբրև պատգամաւոր բնագէտների և բժիշկների XII համագումարին պրօֆ. Կ. Խարիչկովին, միջնորդելու, որ հետևեալ համագումարը տեղի ունենայ Թիֆլիսում։ Թիֆլիսի հաստատութիւններից առ այժմ համաձայնութիւն է յայտնել միանալ յիշեալ միջնորդութեանը՝ Կովկասեան Բժշկական Ընկերութիւնը։

◆ Կովկասեան տնայնագործական կոմիտէն Արխիպովի նախագահութեամբ լսեց կոմիտէի անդամ Ալ. Բալանթարի յայտարարութիւնը Թիֆլիսում 1911 թ. տնայնագործական իրերի ցուցահանդէս հիմնելու մասին և որոշեց խնդրել Բալանթարին կոմիտէի քննութեանը ներկայացնել մի մանրամասն մշակված զեկուցում այդ խնդրի մասին։

◆ Կարող ենք հաղորդել մի քանի տեղեկութիւններ «Արօր» ամսագրի խմբագրական կազմի մասին։ Ինչպէս յայտնեցինք, «Արօրը» լինելու է անկուսակցական, բայց առաջադիմական ուղղութեամբ, գրական-գեղարուեստական-գիտական բովանդակութեամբ և նրան կարող են մասնակցել իրանց աշխատակցութեամբ բոլոր գրական ույժերը, առանց քաղաքական այս կամ այն համոզմունքի խտրութեան, եթէ համակրում են ամսագրի ծրագրին։ Ամսագիրը հեռու է պահելու իրան բանակռւից և տալու է յօդուածներ վերաբերեալ միայն սկզբունքային հարցերին։ Խմբագրական կազմը ժամանակաւորապէս կազմված է այսպէս. Հ. Առաքելեան (խմբագիր-հրատարակիչ), Ստեփան Մալխասեան, Պետրոս Զաքարեան, Ռուբէն Խանազադեան, Արամ

Նազարեթեան և Արշալույս Մխիթարեան (քարտուղար)։ Որոշված է հետևել մի որոշ և խիստ ուղղութեան՝ ուղղագրութեան և լեզուի մէջ։ Առանձին հրաւէր այս կամ այն գրողին չէ լինելու, այլ, ինչպէս ասացինք, գրողներից ով ցանկանայ կարող է աշխատակցել, համակերպելով ծրագրին։ Ամսագրի առաջին համարը լոյս կը տեսնի յունվարի 15-ին։

◆ Յիշեցնում ենք, որ այսօր, երեկ. ժամը 6-ին, Հայ Ազգագրական Ընկերութեան բնակարանում տեղի կունենայ հայ-վրացական բանասիրութեան մասնաժողովի նիստը։

◆ Այսօրվանից կը սկսվի տ. Կոմմիսսարժեվսկայայի գաստրօլների շարքը արքուն. Թատրոնում։ Առաջինը կը խաղացվի Զուդերմանի յայտնի «Հայրենիք» դրաման։

◆ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Րուդօլֆը առաջարկել է գնել Վակէ քաղաքամասում $5^{1}/_{2}$ դեսեատին հող, կառուցանելու համար այդտեղ ուսուցչական ինստիտուտի ապագայ շինութիւնը։

◆ Թիֆլիսի քաղաքային առաջին ապաստարանում անցեալ նոյեմբեր ամսում գիշերել են 170 հոգի 2966 անգամ. նրանք ըստ ազգութեան բաժանվում են հետևեալ կերպով—ռուսներ՝ 57 հոգի, հայեր՝ 61 հ., վրացիներ՝ 37 հ., լեհեր՝ 5 հ., գերմանացիներ 5 հ., Թուրքեր՝ 3 հ., լիտովցիներ՝ 1 հ. և լատիշներ՝ 1 հ.։

◆ Դեկտ. 7-ին (ն. տ.) Բուխարէստում վախճանվել է անգլիացի յայտնի գրող տ. Մարջօրի Ուարդրօպը, որ Թարգմանել է Իլ. Ճավճավաձէի «Գանդեգիլի» գրուածքը։ Հանգուցեալը ունի նաև մի քանի ուրիշ Թարգմանութիւններ Վրաստանի մասին։ Հանգուցեալ Ուարդրօպը 14 տարի առաջ իր եղբայր Օլիվէրի հետ հիւր էր Վրաստանում և այն ժամանակից սիրով նուիրեց իրան վրաց գրականութեան և կեանքի ուսումնասիրութեանը։ Նա գեղեցիկ կերպով տիրապետում էր վրացերէնին և ազատօրէն գրագրութիւն ունէր այդ լեզուով իր վրացի ծանօթների հետ։

◆ Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնակատար Յովսէփ Խունունց հրաժարական է տուել իր պաշտօնից։

◆ Կ. պոլսեցի տիկ. Դիանա Կօմբօըեան խնդրում է բարի մարդկանց ուշք դարձնել իր անելանելի դրութեան վրա։ Տիկինը ապրում էր իր եղբօր աշխատանքով, բայց վերջինս անյայտացել է, որի պատճառով տիկինը մնացել է անօգնական վիճակի մէջ։ Խնդրում է օգնութիւն։ Հասցէն՝ Батарейная ул. д. № 22.

◆ Ներկայումս Մօսկվայում բնակվող հայերի Թիւը հասնում է 10,000 հոգու, այնպէս որ սահմանված հոգևորական կազմը՝ 2 քահանայ՝ չէ կարողանում լրացնել նրանց հոգևոր պէտքերը։ Նորից հարց է ծագում երրորդ քահանայի մասին։ Այդ առիթով մօտիկ ապագայում պիտի կայանայ ծխականների ընդհանուր ժողով, որի մէջ ի միջի այլոց պիտի քննվեն բարձրագոյն հաստատված եկեղեցական կառավարութեան մի քանի հնացած կէտերը։ Սակայն հայ հասարակութեան մէջ կան անհատներ, որոնք ո՛չ կարիք են տեսնում երրորդ քահանայի, ո՛չ կանոնադրութեան քննութեան։ Մեծամասնութիւնը կողմնակից է եկեղեցական խորհրդի վճռին, որի ձեռներէցութեամբ և գումարվում է ծխականների ժողովը։ («Гол. М.»)

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով զինւորական մինիստրութեան մէջ մշակվում է մի օրինագիծ կօզակութիւնը իբրև զօրքի մի տեսակի վերածելու մասին։ Մտադրութիւն կայ մի շարք տարիների ընթացքում կօզակներին դարձնել քաղաքացիներ։

◆ «Սուրհանդակի» վերջին (№ 38) համարում Ատրպետի տպած նամակի առիթով հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել։ Պարոնին վերագրվող արարքի մասին գրել է, բացի Իբօյից և Հայկազունից «Մշակի» մէջ, նաև մի այլ անձն, ինչպէս և «Վտակի» մէջ Նոհրատեանը։ Եթէ Ատրպետին վերագրված արարքը զրպարտութիւն է, ամենաուղիղ ճանապարհը՝ փաստայի հերքում տալն է. և եթէ Ատրպետը ուղարկէր մեզ հերքում, մենք կը տպէինք անշուշտ։ Դատարանին դիմելու սպառնալիք կարդալը դեռ հերքում չէ նշանակում։ Մենք շատ ուրախ կը լինէինք, եթէ Ատրպետը կարողանար արդարացնել իրան իր վրա բարդված ծանր մեղադրանքից, որովհետև երբէք մեզ հաճելի չէ, որ հայ գրողը արատաւորվի։ «Մշակը» չէր կարող անտես անել և չը տպել մի փաստ, որ տեղի է ունեցել Թաւրիզում, իսկ փաստն այն է, որ հարցաքննվել են վկաներ և նրանք աննըպաստ վկայութիւն են տուել։

◆ Ա. Եարօշէնկօն այսօր Գանձակում դասախօսութիւն է կարդում օդագնացութեան մասին։ Նա մտադիր է դեկտեմբերի 13-ին կրկնել իր դասախօսութիւնը Թիֆլիսում։

◆ Մեզ հաղորդում են Շուշուց, որ արդէն կազմվել է 1909—1913 քառամեակի քաղաքային ձայնաւորների այն ցուցակը, որ կողմնակից է քաղաքային ինքնավարութեան նորոգման։ Ձայնաւորների ցանկը հաստատվելուց յետոյ տեղի կունենայ քաղաքագլխի ընտրութիւնը։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Նոյեմբերի լոյս 28-ի գիշերը կալանաւորվեց յայտնի գրող Վ. Ա. Բօգուչարսկին (Եակօվլեվ)։ Խուզարկութեան ժամանակ նրանից վերցրին նրա սկսած պատմական աշխատանքի նիւթերը և պատմական շատ դօկումէնտներ։ («Р. В.»)

◆ Մօգիլեվի հոգևոր սեմինարիայի ռէկտորը սինօդին զեկուցում ներկայացրեց սեմինարիայի աշակերտ Աստրաշանօվիչի անձնասպանութեան առիթով, որը, լուրերի համեմատ, անմեղ արձակված էր սեմինարիայի մէջ տեղի ունեցած անկարգութիւնների համար։ Ռէկտորը զեկուցանում է, որ Աստրաշանօվիչն էր անկարգութիւնների սկզբնապատճառը և առհասարակ վատ վարքի տէր էր, չէր յաճախում ժամասացութիւններին, կարդում էր յեղափոխական գրքեր և այլն։ Ապա ռէկտորը հաղորդում է, որ առաջին չորս դասարանների աշակերտներն արձակված են և նրանց խնդիրքը չէ ընդունված։ Լուրերի համեմատ, պատշաճաւոր իշխանութիւնը գոհ չը մնաց այդ բացատրութիւնից և առաջարկեց Թեմական առաջնորդին խիստ քննութիւն կատարել։ («Р. В.»)

◆ Սիբիրն էլ ստացաւ քրէական դատավարութեան անհրաժեշտ ապահովագրութիւնը՝ երդուեալ-դատաւորների հաստատութիւնը, ժողովրդական խղճի, կեանքի, հասկացողութեանց այդ գեղեցիկ ներկայացուցիչներին։ Մնացին Լեհաստանը և Կովկասը, Միջին-Ասիան։ Ե՞րբ պէտք է մենք էլ հասունացած ճանաչվենք այդ դատավարութիւնը ստանալու համար. անշուշտ դրա մասին մտածում են մեր կովկասեան պատգամաւորները, առաւել Յ. Սաղաթելեանը։

◆ Նոյեմբերի կէսից տեղական նահանգական դատարանները սկսեցին դատավարութիւնը ժողովրդական ներկայացուցիչների մասնակցութեամբ։

◆ Վօրօնէժի նահանգի Ուրազօվօ գիւղում զեմստվօն բացել է ռէալական դպրոց։ Գիւղացիները դպրոցի բացման համար հաւաքել են 20,000 ր. և խոստացել են տարեկան 1000-ական րուբլի վճար։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

I

Նկարիչ Գ. Բաշինջաղեանը հրաւիրված է մայրաքաղաք՝ մասնակցելու պատկերահանդէսի։

Բաշինջաղեանը պատրաստել է նկարներ և դեկտեմբերի 20-ից յետոյ պէտք է ճանապարհ ընկնի իր պատկերներով դէպի մայրաքաղաք։

Նկարները ներկայումս գտնվում են Բաշինջաղեանի տանը և հանդէս են դրված հետաքրքրվողների համար։

Իւրաքանչիւր օր ցերեկվայ ժամերին կարելի է այցելել պատկերահանդէսը և ծանօթանալ նկարչի նոր ստեղծագործութիւնների հետ։

Մուտքը ցանկացողների համար ձրի է։

Նկարչի բնակարանն է Իգմայիլօվսկայա փողոց № 16։

Պատկերների մասին մենք կը տանք տեղեկութիւններ։

ՖԷԼԻԷՏՕՆ

ԴՐՍԻՑ՝ ՈՒՐԻՇԻ ԱՉՔՆ ԵՆՔ ՀԱՆՈՒՄ, ՆԵՐՍԻՑ՝ ՄԵՐ

Երբ կարդում եմ հայ Թերթեր, խօսում մեր հասարակական գործիչների և անգործների հետ,

Երբ լսում եմ, Թէ ինչպէս «մեր գործերը» վատ են գնում և փոքր առ փոքր մահվան մօտենում, մտածում եմ՝

— Խե՜ղճ հայ ազգ. նա կորչում է... ոչ Թէ Լենկթեմուրի ձեռքով և նրա ժամանակ, այլ մեր ձեռքով և այն էլ՝ քանիերորդ դարում...

Մտածում եմ և քիչ է մնում, որ լաց լինեմ։

Բայց բաւական է ինձ կարդալ օտար Թերթեր, ուր գրում են հայի մասին, խօսել օտար մարդկանց հետ, որ չեն ճանաչում մեզ ու մեր գործերը, որ ասեմ՝

— Դրսից ուրիշի աչքն ենք հանում, ներսից՝ մեր։

Եւ ճիշդ որ. անցեալներում զրոյցի բռնվեցի մի վրացու հետ, մեր հարևան, մեզ հետ կողք-կողքի ապրող մի վրացի ազգասէրի հետ։

— Մե՜ծ, շա՜տ մեծ ազգ էք դուք հայերդ,—ասաց նա.—մենք նախանձում ենք ձեզ...

— Մե՞զ,—զարմացայ ես։

— Այո՛, ձեզ. ունէք հարիւրաւոր դպրոցներ, բոլորն էլ ապահովված, ուսուցչական պատրաստված կազմով, ուր տասնեակ հազար աղջիկ ու տղայ հայ լեզու, հայ գրականութիւն են սովորում...

Ես աչքերս չռեցի...

— Ունէք գիտնական հոգևորականութիւն իր կոչման բարձրութեան վրա կանգնած, շիտակ, անկաշառ, գաղափարական։

Ես տեղումս շարժվեցի...

— Ունէք բարեգործական, կուլտուրական, գիւղատնտեսական, տնայնագործական և այլ ընկերութիւններ, բոլորն էլ ապահով, հարիւրաւոր, հազարաւոր անդամներով։

Ես կանգնեցի տեղիցս...

— Ունէք ճոխ գրականութիւն, հարուստ մամուլ՝ ամեն տեսակի՝ հազարաւոր բաժանորդներով, ընթերցողներով...

Ես սկսեցի անհանգիստ անց ու դարձ անել սենեակում։

— Ունէք առատաձեռն վաճառականութիւն, որ ոսկու անձրև է Թափում ձեր ազգի գլխին և միմեանց մէջ մրցութեան մտնում՝ Թէ ով աւելի շատ տայ, աւելի մեծ գործ կատարի...

Ես հազիւ շնչում էի...

— Ունէք անձնազոհ, գաղափարական երիտասարդութիւն, որը առաջ է տանում շինարարական այն մեծ գործը, որ կոչվում է ազգային միութիւն։

Արտասուքը ինձ խեղդում էր։

— Ունէք Պետական Դումայում փայլուն ներկայացուցիչներ՝ Աջէմովի նման, որ եռանդուն պաշտպանում է հայ ազգի շահերը, և Սաղաթելեանի նման, որ... լռում է...

Ես գլխովս տմբտմբացրի...

— Ունէք հայ ատրճանաւորների մի զօրեղ կազմ, որ գիշեր ցերեկ մտածում և հոգ է տանում հայ ժողովրդի մասին։

Ես գլխարկս էի փնտռում...

— Ունէք կազմակերպված հայ գիւղացիութիւն, որը գիւղատնտեսութեան վերջին խօսքին է ման գալիս և մտցնում իր կեանքի ու գործի մէջ..

Ես վերարկուիս մասին էի մտածում...

— Ունէք անԹիւ անձնուրաց բժիշկներ, փաստաբաններ, որոնք քաղաքից քաղաք, գիւղից գիւղ ընկած փնտռում են մարդիկ, որոնց օգնել կարողանան։

Ես մի վայրկեան դուրս նայեցի՝ այնտե՞ղ է արդեօք նոր կրկնակօշիկս...

— Իսկ մենք՝ Թշուառ վրացիներս ոչինչ չունենք և նախանձում ենք ձեզ։

— Ասացէք խնդրեմ,—դարձաւ ինձ խօսակիցս,—ինչ անենք որ մենք ձեզանից մի քիչ բան սովորենք, որ մի քիչ նմանվենք ձեզ՝ երջանիկ հայերիդ...

Ես այլ ևս նրան չէի լսում. առայ գըլխարկս և դուրս փախայ գոռալով.

— Վրացի՛ մնացէք, բարեկամ, վրացի...

Եւ այսպէս՝ դրսից մենք հանում ենք ուրիշի աչքը, իսկ ներսում... մեր։

Սալ-Ման

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 23 նոյեմբերի

Ընդհանուր Պարսկաստանի այսօրվայ քաղաքական ալեծուփ կացութեան մէջ ուրախալի երևոյթ է տեսնել և կուլտուրական ձեռնարկութիւններ։ Ուրմիայի լճի շահագործութեան հարցը ամենաշահեկան ու հրատապ խնդիրն է այս րօպէիս։ Թաւրիզում կազմվում են ակցիոներական ընկերութիւններ այդ նպատակով, որոնք ուզում են Թաւրիզից Մարաղա և այնտեղից Ուրմի ճանապարհներ շինել, լճի վրա շոգենաւ, օժանդակ նաւեր ու նաւակներ բանեցնել վաճառականութիւնը զարգացնելու և նրա համար բարգաւաճ հող պատրաստելու համար։ Լիճը շահագործելու հարցին բուռն հետամտութիւն են ցոյց տալիս նաև օտար կապիտալիստներ, առաւել ռուսներն ու անգլիացիները։ Չը նայած զօրեղ մրցումին, այնուամենայնիւ գործի աջողութիւնը մնում է պարսիկ նացիօնալիստների կողմը։ Ինչչափ էլ լինի նացիօնալիստների աջողութիւնը, սակայն, գործին հմուտ անձնաւորութիւնների կարծիքով, Ուրմիայի լճի խնդիրը պէտք է դառնայ մի օր կռւախնձոր օտար պետութիւնների մէջ։

Պարսիկ ակցիօներական ընկերութիւնների գլուխն է անցել Րահիմ աղա Ղազվինիյն, մի հարուստ, ձեռներէց և աշխատասէր անձնաւորութիւն։ Աղա Րահիմ Թաւրիզի Խիավան Թաղում շինել է տալիս խոշոր մի գործարան մանածի համար։ Անձամբ գնացել է Գերմանիա, բերել է տուել հսկայ մեքենաներ և վեց հոգի գերմանացի տեխնիկներ և մեխանիկներ։ Պարսիկ տարրը ընդունակ է վաճառականութեան։ Նրան պակասում են ձեռներէց գործօններ, և այդ նա ունի հիմա յանձին Րահիմ աղա Ղազվինիյի։ Ուր էր Թէ նման ինիցիատոր մարդիկ երևան գային և տային ցանկալի մղում արդէն մտածված և նախաձեռնված գործերին։

Հայկազուն

Յ. Գ.—Այս րօպէիս լսեցի, որ Մարաղայի ճանապարհին սպանված է Թիւրքահպատակ մի հայ վաճառական՝ որ պարապում էր աղիքի գործով։ Սպանութեան շարժառիթը և այլ մանրամասնութիւններ չը կան. եթէ ստուգեցի՝ կը գրեմ «Մշակին»։

Նոյն

ԿՐԵՏԷՆ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԸ

«Daily Telegr.» լրագրի Թղթակիցը, որը նորերս վերադարձել է Կրետէից, հաղորդում է իր տպաւորութիւնները կրետացիների շրջանում գերակշռող տրամադրութեան մասին։ Յունաստանի որոշման պատճառով—յետաձգել ընդհանուր ընտրութիւնները մինչև եկող տարվայ հոկտեմբերը—կրետացիները վճռեցին փոխել ներկայ տարում իրանց ժամանակաւոր կառավարութեան կազմը։ Այդ նպատակով կրետական ազգային ժողովի գումարումը նշանակված է դեկտեմբերի 10-ին։ Քաղաքական բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները լիազօրութիւն տուին «Daily Telegr.» լրագրի Թղթակցին իրանց կողմից անել հետևեալ յայտարարութիւնը.

«Կրետէն, անկախ ընդհանուր ընտրութիւնների պայմանաժամից Յունաստանում, չի հրաժարվի իր ներկայացուցիչներն Աթէնք ուղարկելու դիտաւորութիւնից։ Այդ վճիռը անխախտելի է։ Այդ որոշումը չեն կարող փոխել ոչ մեծ պետութիւնների ներկայացուցիչները, ոչ կրետական կուսակցութիւնների ղեկավարները։ Դեռ այդ քիչ է. ոչ մի ինքնավարութիւն Թիւրքիայի գերիշխանութեամբ, որքան էլ նա ընդարձակ լինի, չէ կարող բաւարարութիւն տալ Կրետէի ազգաբնակութեանը։ Կղզին ներկայ րօպէում արդէն վայելում է յայտնի ինքնավարութիւն. պետութիւնները ոչ-պաշտօնապէս միացրել էին նրան Յունաստանի հետ։ Ինքնավարութիւնը Կ. Պոլսի իշխանութեան ներքոյ մի քայլ յետ կը լինէր, և ոչ Թէ առաջ. Յունաստանի հետ դաշնակցութիւն—ահա կրետացիների պրօգրամը, և ամեն մի ուրիշ ելք, ընդհանուր կարծիքով, կարող է միայն արիւնահեղ ընդհարումներ առաջացնել»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդացաւ մի մարդ։

Նահանգական դատարանը արդարացրեց Մէնչիկօվին, որին գեներալ Ֆլուգը մեղադրում էր վիրաւորական լուրեր տարածելու մէջ։

ՄՕՍԿՎԱ։ Խօլերայով հիւանդացան 5, մեռան 4 հոգի։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Ժանտախտը երևացել է նաև հարաւային մասում։ Հիւանդացել են 13 մարդ։

ՕԴԵՍՍԱ։ Բացվեց նկարչական ցուցահանդէսը։

ՊԵՐՄ։ Նահանգական զեմստվային խորհրդակցութիւնը կէս միլիօն րուբլի յատկացրեց Ուրալի պօլիտեխնիկումը բանալու համար։

ԿԻԵՎ։ Բացվեց նահանգի սպառողական ընկերութիւնների լիազօրների համագումարը։ Մասնակցում են 60 հոգի 201 ընկերութիւնների կողմից։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Կոմս Օստէն-Սակէնի արձանի բացման առիթով տեղի ունեցաւ նախաճաշ, որ անցաւ շատ ուրախ։ Եղան մի շարք ճառախօսութիւններ։

ՓԱՐԻԶ։ Սենատն ընդունեց կառավարական խմբագրութեամբ ծերունի բանւորներին ապահովագրելու օրինագիծը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Հիւանդանոց
Մշտական մահճակալներով
Թիֆլիս, Միխայլօվսկի պր., Միքայէլեան հիւ. դիմաց, 59, տել. 1026
Հիւանդների ընդունելութիւն.
ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւ.։
Ն. Ա. ԱԹԵՆԵԱՆՑ—ցեր. ժ. 1—2-ը, ականջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ։
Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ—ցեր. ժ. 1—2-ը, վիրաբուժական հիւանդութիւններ։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, ջղային և ներքին հիւանդութիւններ։
Մ. Պ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժամը 10—11-ը, ներքին և երեխաների հիւանդութիւններ։
Ա. Դ. ԿԱԼՄԸԿՕՎԱ-ՎՆՈՒԿՕՎԱ—ցերեկ. 2—3 ժամը, կանանց հիւանդութիւններ։
Բժշկութիւն էլեկտրականութեամբ, մասսաժով և հիպնօզով։ Միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստումն։ Ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կ.։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է Թէ ընդհանուր և Թէ առանձին սենեակներից
(Կ. Ե. ու.) 236. 100—70

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—40

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինւորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ.
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տելէֆօն № 481.
Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան ժամը 11-ից մինչև 5-ը ցերեկվայ։
ԲՕԺՕՎՍԿԻՅ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։
ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.։
ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։
ԿԱԼՄԸԿՕՎ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի օրերից։
ՆՕՎԻՑԿԻՅ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և կէսը։
ՊԱՎԼՕՑԿԻՅ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.։
Ե. ՁՈՒԴՆՕՎՍԿԻՅ—ջղային, հոգեկան, էլեկտրոտերապիա երկուշ., չորեքշ., հինգշաբթի 4—5 ժ.։
ՏԷՏՐԱՁԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։
ԿԻՆ ԲԺ. ԽՈՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԱՍՊԻՍՕՎ—կոկորդի, քթի, ականջի հիւ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻՑԿԱՅԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ $11^{1}/_{2}$—$12^{1}/_{2}$ ժ. ցեր.։
ԼԵՎԻ—երեխաների և ներքին, ցեր. ժամը 1—2-ը։
ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա.—սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ $9^{1}/_{2}$—$10^{1}/_{2}$ ժ. առ.։
Համախորհուրդ, օպերացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնօզ, ստնտուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։
(Կ.) 991. 100—11

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12^{1}/_{2}$—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—$12^{1}/_{2}$.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—46

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.
Տելէֆօն № 40.
(Ե. ու. Կ.) 984. 100—29

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼԵՒՍ ՉԸ ԿԱՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ!!!
Եթէ Դուք իսկապէս կամենում էք բժշկվել սիֆիլիսից, տրիպպերից, շանկերից, բէլից, սեռական Թուլութիւնից և կամ Ձեր առողջութիւնը քայքայված է օնանիզմից—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան տղամարդկանց և կանանց սեռական անդամների գաղտնի հիւանդութիւնների» անունով գիրքը՝ բաւականաչափ նկարներով և գծագրերով, բաղկացած 250 էջից։ Գինը՝ վերադիր վճարով և ճանապարհածախքով—1 ր. 50 կ.։ «Ժողովրդական բժշկարան», ձեռնարկ առանց բժշկի օգնութեան բոլոր հիւանդութիւններից բժշկվելու համար (բացի գաղտնի հիւանդութ.), մեծերի և երեխաների համար, բաւականաչափ գծագրերով, էջ մօտ 250, գինը՝ վերադիր վճարով և ճանապարհածախքով—1 ր. 50 կ.։ Երկու գրքերը միասին—2 ր. 64 կ. (կարելի է և նամականիշով)։ Միակ պահեստը С.-Петербургъ, Офицерская, 50—224. Ф. Словаку.
(П. 159888) 1289. 1—1

„Գուտտենբերգ“
գրախանութում վաճառվում է Կաուտսկիի ամենալաւ աշխատութիւններից մէկը՝ (146 մեծադիր երես գինն է պօստի ծախքով 30 կօպէկ), այն է՝
К. КАУТСКІЙ:
„Этика и матеріалистическое пониманіе исторіи, съ приложеніемъ статьи Жизнь, Наука и Этика“.
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“. Գրախանութի ցուցակը ուղարկվում է ձրի։
(օ. մ.) 1305. 3—2

ԵՂԲ. ԱՎԱՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
այգին բաց է Թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի մրգատու ծառեր ու դեկօրատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ։
(Հ. Կ.) 1105. 15—14

Առևտ.-Արդ. Մինիստ.
ԹԻՖԼԻՍԻ № 24 ՍՏՈՒԳԻՉ ՊԱԼԱՏԸ
ՉԱՓԵՐԻ և ԿՇԻՌՆԵՐԻ
Միխայլօվսկի պրօսպեկտ, № 117.
Հաղորդում է, որ համաձայն Առևտր. Կանոն. 748-րդ յօդ., բոլոր չափերը և կշիռները պէտք է ունենան իրանց վրա Ստուգիչ Պալատների որոշված կնիքը, որի համար խնդրում է առևտրական և առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւնների, գեղատների, պահեստների, ֆաբրիկաների, գավօդների, գրասենեակների, բանկերի և այլն տէրերին, տեսնել՝ արդեօք ունե՞ն այդպիսի կնիքներ իրանց կշիռները, կշռաքարերը, սաժէնները, արշինները, խմիչքեղէնի չափերը՝ գինու, սպիրտի, օղու, գարեջրի և կաթի համար, ջրի, գաբեճրի օղու և այլն տակառները, այսինքն այն բոլոր առարկաները, որոնցով չափվում և կշռվում են։ Կնիք չունենալու դէպքում, պարտաւորեցվում է ներկայացնել Ստուգիչ Պալատը՝ կնիք դնելու համար։ Հակառակ դէպքում, չափերը և կշիռները կը վերցվեն տէրերից, իսկ վերջիններս կենԹարկվեն քրէական պատասխանատուութեան, համաձայն Քր. Օրէնսգրքի 1176-րդ յօդուածի։
Պալատի կառավարիչ՝ Ա. ՐԷՋՎԵԱԿՕՎ
(Կ. Հ.) 1314. 2—1



ՊԱՏԷՖՕՆ


ПЛАСТИНКИ ПАТЕ ИГРАЮТЪ БЕЗЪ ИГОЛОКЪ
УТВЕРЖДЕН ФАБРИЧНАЯ МАРКА

ՆՈՒԱԳՈՂ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ ԱՌԱՆՑ ԱՍԵՂՆԵՐԻ

ԵՂԲԱՐՔ ՊԱՏԷ ՊԱՐԻԶՈՒՄ

ԱՄԵՆԱԼԱՒ ԽՕՍՈՂ ՄԵՔԵՆԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գինը 20 րուբլուց սկսած եւ բարձր

Երկկողմ պլաստինկաներ—24, 28 և 50 սանտիմէտր մեծութեան:

Ընդարձակ րէպէրտուար բոլոր լեզուներով, նոյնպէս և վրացերէն, հայերէն, Թուրքերէն և օսերէն լեզուներով:

ՆՈՐ ԳՐՈՒԹԻՒՆ անզուգական **ԱՆԱՍՏԱՍԻԱ ԴՄԻՏՐԻԵՎՆԱ ՎԵԱԼՑԵՎԱՅԻ**

Անդրկովկասի բոլոր քաղաքների համար պահանջվում են մեծաքանակ գնողներ մենավաճառ իրաւունքներով:

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԵՒ ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՀԵՍՏԸ

ԿԱՐԼ ՇՈՒՄԱՆ, ԹԻՖԼԻՍ, Գոլովինսկի պր. № 10. 1099. 5—4

ՔՈՒԹԱՅՍՈՒՄ Ա. Ր. Տարագորկի մօտ: ԳՈՐՈՒՄ Վ. Գ. Մուշարիձէի մօտ:

ՏՕՆԱԾԱՌԻ ԶԱՐԴԵՐ

Վաճառքը վերաբացված է: Նորագոյն կրթիչ խաղեր, խաղալիքներ և զբաղելիքներ բաւական մեծ քանակութեամբ ծախվում են մոսկովեան գներով: Դպրոցներին և հիմնարկութիւններին 15% զեղչ: Գաւառները ուղարկվում են վերադիր վճարով: Դիմել՝ Թիֆլիս, Գոլովինսկի պր. № 23, խանութ „Бижутери-Имитасион“.

(կ.) 1302. 3—1

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԿՐԹԻՉ ԽԱՂԵՐ, ԶԲԱՂԵԼԻՔՆԵՐ, ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

Սկսած 5 կոպէկից մինչեւ 25 ռուբլի.

Մանկական գրքոյկներ՝ ռուսերէն և գերմաներէն, կոտիլիոն պատկանելիքներ, դիմակներ.

Տօնածառի արդուզարդեր

2 րուբ. սկսած մինչև 10 ր. և աւելի: Գաւառների համար ունենք մեծ քանակ. ապրանք:

ԳՆԵՐԸ ԷԺԱՆ ԵՆ

Թիֆլիս, Դվորցովսկայա փող., խանութ „Учебныя Пособія“.

(կ.) 1301. 4—1

ՅԱՏԿԱՊԷՍ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԲԱՑՎԱԾ

ՄՕՍԿՕՎԵԱՆ ԽԱՆՈՒԹ

Գոլովինսկի պր., № 19, Արտիստ. Ընկ. շինութ. և Մայզելսոնի խանութի մէջև. Առաջիկայ տօների համար ստացված են՝ 40,000 հատ զանազան տեսակ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ—գները 10 կ. սկսած մինչև 25 րուբ.: 650 հատ զանազան տեսակ կրթիչ ԽԱՂԵՐ—25 կ. սկսած մինչև 10 ր.: 520 հատ զանազան տեսակ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ և ՖՈՒ ԿՕԴԻԼՆԵՐ—25 կ.—15 ր.: 120 հատ զանազան ԶԲԱՂԵՑՈՒՑԻՉ ԱՌԱՐԿԱՆԵՐ՝ ըստ Ֆրէբէլի:

Տօնածառի զարդարանքներ

մեծ քանակութեամբ

Տօնածառի համար պատրաստի կոլլէկցիաներ—2 ր. սկսած մինչև 25 րուբլի: Տուալէտային զարդարանքներ և առարկաներ՝ ընծայաբերելու համար:

ՎԱՃԱՌՔԸ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

Գները նոյնն են՝ ինչպէս Մոսկվայում:

Հասարակական և դպրոցական հիմնարկութիւնների տօնածառերի համար 5% զեղչ:

Ուղարկում ենք վերադիր վճարով՝ նախապէս ստանալով արժէքի կէս մասը:

(կ.) 1251. 10—3

ԲԱՑՎԱԾ Է 1910 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

V ՏԱՐԻ **ՀԱՍԿԵՐ** V ՏԱՐԻ

մանկական պատկերազարդ ամսագիր

Ամսագիրը լոյս է տեսնում 32—48 երես., մեծադիր գրքոյկներով, ընդարձակ ծրագրով

Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

1910 Թւին «ՀԱՍԿԵՐԻ» **ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐԸ** լինելու են՝

2 ՓՈՒՆՍՏԻԿ ՀԷՔԻԱԹ, 2 ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԱԾՔ, 1 ՄԱՆԿԱԿԱՆ ՊԻԷՍ, 1 ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ, 1 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ, 3 ՎԷՊԻԿ, ՊԱՏՄՈՒԱԾՔ, ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԶՐՈՅՑ, 2 պրակ «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ»

ԸՆՏԱՆԵԿԱՆ կրթութեան հարցերին նուիրված

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ

Տարեկան	4 ր.	առանց յաւելուածների 3 ր.
Գաւառներում	4 ր. 50 կ.	3 ր. 50 կ.
Արտասահմանում	12 ֆր.	9 ֆր.
Սկզբից (1905 թ. սեպտ. մինչև 1910 վերջը)	16 ր.	12 ր. 50 կ.

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25—(Тифлисъ, редакція журнала «АСКЕРЪ». Tiflis (Caucase) Rébaction du journ. «Haskér».

Խմբագիր-հրատարակիչ ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

Թիֆլիսում կարելի է գրվել նաև «Գուտտենբերգ», Բագւում Сотрудникъ, Երևանում՝ Պետրոս Յովհաննիսեանի, իսկ Վլադիկավկազում՝ Դեյկարխանեանի գրախանութներում:

(6, 10, 13, 20, 25) 1315. 5—1

ԿՕՇՈՒԵՂԷՆԻ ՊԱՀԵՍՏ

Եղբ. ԵԱՐՂՈՒԼԵԱՆՑՆԵՐԻ

Թիֆլիս, Միջին փողոց, № 65.

Ցայտնում ենք ի գիտութիւն յարգելի վաճառականների և հասարակութեան, որ մեր պահեստում ստացված են մեծ քանակութեամբ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ (галоши) և ԿՐՆԿԻ ՌԷՏԻՆՆԵՐ, զանազան տեսակ ՇԷՎՐՕՆԵՐ, ԲՕՔՍԵՐ (խրոմ) ու ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ—Ռուսաստանի և արտասահմանի արդիւնաբերութիւն, նոյնպէս և կօշկակարների գործիքներ ու կօշկաղեղեր յայտնի ֆիրմաների: Ինչպէս կրկնակօշիկները, նոյնպէս և բոլոր ապրանքները ծախում ենք—մեծաքանակ (оптомъ) գնողներին գործարանային գներով, իսկ հատավաճառը (розничн. продажа) ամենաճեռնտու գներով: Ունենք բաժանմունք ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, որտեղից նոյնպէս կարելի է ստանալ կաշուեղէն և գալանտերէյնի ապրանքներ ձեռնտու գներով: Վարշավայի բաժ. հասցէն՝ Варшава, Лешно № 8, М. Н. Яргулову.

(կ. հ.) 938 30—25

НАСТОЯЩІЯ ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ЗИНГЕРЪ

Նորին Մեծութեան Պալատի մատակարար

Խանութի ցուցանակը հաստատված մինիստրութիւնից

1 ՌՈՒԲ. ՍԿՍԱԾ {**ՎՃԱՐԸ ՄԱՍ-ՄԱՍ**} 1 ՌՈՒԲ. ՍԿՍԱԾ

Ձեռքի կարեմեքենաներ՝ 25 րուբ. սկսած՝ ծախվում են Ռուսաստանում ամենուրեք, բացառապէս սեփական խանութում:

Թիֆլիսում 3 սեփական բաժանմունքներ.

1) Գոլովինսկի պր., տ. Միրիմանովի, Փոխարքայի պալատի դիմացը.

2) Վօկզալնայա փող., տ. Ենֆիաճեանցի.

3) Հաւլաբար, Կախէտինսկայա փող., տ. Հասան-Ջալալեանի.

Զգուշացէք կեղծիքներից!

THE SINGER MANFG. CO. TRADE MARK

Ֆաբրիկայի դրօշմը

Կայս. Մեծութ. Պալատի մատակարար

(կ.) 997. 20—11

ԱՂԲԻՒՐԸ դպրոցական աշակերտների և աշակերտուհիների համար ճանապարհածախսով տարեկան ՄԵԿ Ր.: Նոյն ԱՂԲԻՒՐԸ դպրոցների, գրադարանների, հաստատութիւնների համար տարեկան 3 ր.:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮРЪ“.

(1) 1241. 5—5

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԱՆԱՆՑ ՊՕԼԻՏԵԽ.

Բարձր Կուրսերի

IV ԿՈՒՐՍԻ ՈՒՆԿՆԴՐՈՒՀԻ

Պատրաստում և կատարում է դասերի կրկնողութիւն գիմնազիական բոլոր առարկաներից: Ունի երկար տար/ների փորձառութիւն:

Վանքսկի պերէուլօկ, № 26.

(ու. կ.) 1293. 2—2

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ

Լօրիս-Մելիքօվսկայա, № 6, պօստին մօտ:

ԽՐՕՄՕԼԻՏՕԳՐԱՖԻԱՅՈՒՄ

ԼԵՎԻՏ ԵՒ ՄԵՍՆԻԿ ԸՆԿ.

Ընդունվում են պատուէրներ լիտօգրաֆիական ամեն տեսակ աշխատանքների: Չափաւոր գներ: Գեղեցիկ և ճիշդ կատարումն: Ցանկապէս այցետոմսերի և հաշւեթղթերի պատուէրներ:

(կ.) 990. 12—11



ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

CASCARA MIDY

Ֆրանսիական ժողովրդական միջոց

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ:

Ընդունելութեան չափը. 2 ԴԵՂԱՀԱՏ ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ:

Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հոգս և փորլուծութիւն: Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Парижъ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում:

(6, 16, 26) (M. 305088) 1050. 0—7

Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“

ФАБРИЧ. КЛЕЙМО Т Р Ф Э ПРОВОДНИКЪ РИГА

1888

1897 թ.

ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ, ՅՕՍՕԼԱԿԻՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, № 4.

ԱՌԱՋԻԿԱՅ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է.

ԱՍԲԷՍՏԻ ՉԱՅՐՎՈՂ ՋԻՒՆ ՏՕՆԱԾԱՌԻ ՀԱՄԱՐ.

ՐԷԶԻՆԷ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ.

Գազաններ, տիկնիկներ եւ խաղագնդակներ.

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԸՆՏԻՐ ՍՓՌՈՑՆԵՐ

ՄՈՄԼԱԹԻՑ |կլէօնկա|

ԱՐՇԻՆՈՎ ԵՒ ՀԱՏՈՎ, ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՄԵԾՈՒԹԵԱՆ.

(հ. կ.) 1034. 0—1

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.

Большая Ванкская № 3.